ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ.

ՄՈՍԿՈՒԱ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

887 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐՈՒԱԾ ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ԳՐՉԱԳԻՐ ՀԱՅԵՐԷՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԼՈՒՍԱՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Լազարեան ճեմարանի Արեւելեան Լեզուաց հիմնական մատենադարանում պահւում է ի միջի այլոց մի գրչագիր, որ հնագոյնն է մինչեւ այսօր ծանօթ բոլոր հայ գրչագիրներից։ Նորա մասին շատ անգամ յիշուած է եղել հայ գրչագիրների այլ եւ այլ նկարագրութիւնների մէջ եւ հայ հնագրութեան վերաբերեալ մասնագիտական երկերի մէջ. նորան նուիրուած են եղել եւ մասնաւոր աշխատութիւններ։ Այդ՝ յիշեալ մատենադարանի № 1111 *ստացագիր Ցուցակի մագաղաթեայ Աւետարանն է, որ գրուած է խոշոր Մեսրոպեան կամ երկաթագիր տառերով* ՅԼԶ. *թուականութեան Հայոց եւ յամի Տեառն* 887։

Իբրեւ հնագոյն հայ գրչագիր՝ այս Աւետարանը մեծ կարեւորութիւն ունի հայ հնագրութեան համար եւ մանաւանդ Նոր կտակարանի բնագրի քննական ուսումնասիրութեան համար՝ ի նկատի առնելով նորա բազմաթիւ տարբեր ընթերցուածները. ոչ պակաս հետաքրքրական է եւ գրչագրի ուղղագրութիւնը։

Լազարեան ճեմարանի մասնագիտական Դասարանների (Լիկէօն) Խորհուրդը՝ վաղուց ըմբռնելով հայ դպրութեան այս հազարամեայ յիշատակարանի կարեւորութիւնը գիտութեան համար, միտք յղացաւ սորանից մի երեք տարի առաջ ամբողջութեամբ տպագրելու յիշեալ գրչագրի բնագիրը համեմատ կարեւոր լուսաբանութիւններով։ Բայց յետոյ՝ խորհելով, որ այս անզուգական գրչագրի հրատարակութեան մէջ անհրաժեշտ է պահպանել ամենայն ճշտութեամբ մինչեւ վերջին նշանախեցը բոլոր նորա առանձնայատկութիւնները եւ դորանով միջոց տալ մասնագէտներին, որոնք անդադար դիմում են ճեմարանի վարչութեանը բուն գրչագրի համար, սորա հաւատարմագոյն օրինակները ունենալ իրենց ձեռքի տակ. Խորհուրդը վճռեց լոյս ընծայել ամբողջ գրչագիրը լուսատիպ նմանահանութեամբ։

Լուսատիպ հրատարակութիւնը բաղկացած է 229 *թղթից կամ* 458 *երեսից՝ մեծ քառածալ դիրքով, ընտիր թղթի վերայ* *։ *Գրքին կցած է եւ ընդարձակ Առաջաբան։ Տպագրուած են շատ սահմանափակ թուով օրինակներ (միայն* 300)։ *Գրքի գինն է ճանապարհածախսով*—20 *րուբլի* (23 *ր. վերադիր վճարով) Ռուսաստանի համար, եւ* 60 *ֆրանք Արտասահմանի համար։ Դիմելու է Լազարեան ճեմարան, Մոսկուա։*

Въ Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ, Москва.

---

* Մի քանի թերթեր ուղարկուած են մեզ. յիշուի փոքր տպագրութեան, քննէր թղթի վերայ։